ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2025թ. թիվ 502-Ա

Զ. ԽԱՆՎԵԼՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ Մ.ԹԱՆԴԻԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2)-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի օգոստոսի 28-ի թիվ 501-Ա որոշումը և հաշվի առնելով Զ.Խանվելյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Զարուհի Սերգեյի Խանվելյանին 2025 թվականի օգոստոսի 29-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Մ. Թանդիլյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Զ. Խանվելյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Ստորագրող
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
3905890216

2025-08-29 12:07:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

29 օգոստոսի 2025թ.
ք.Վանաձոր